

ՏԵՔՍՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՎՅՈՒՆ ԱՐԺԵՔԸ*

Անընդհատ անցյալի վերածվող ներկան գոյության պարզագույն կռվից դեպի զարգացման գրեթե անբացատրելի մակարդակներ գնացող մարդուն ցույց տվեց ամեն ինչի վերջավոր լինելն ու ստիպեց արժևորել սեփական անձն ու գործողությունները իր և միջավայրի, իր և իր, իր և իրեն հաջորդների միջև հաստատվող հարաբերությունների մեջ:

Նման արժևորումը գուցե այդպես էլ անտեսանելի լիներ, եթե չլիներ նրա անցումը գաղափարական-հոգեկանից նշանայինի, և մանավանդ ու գլխավորապես լեզվական նշանի՝ **տեքստի**: Լեզվական նշանը, իհարկե, առաջանում է այնտեղ, որտեղ առաջ է գալիս իրականության հատվածների միջև հարաբերությունների պարզագույն փոխանցման-տեղափոխման անհրաժեշտությունը՝ իրականության չափման միավորների տվյալ միջակայքում: Սակայն տեքստը բոլորովին նոր որակ և հարթակներ է ստանում, երբ առաջանում է հարաբերությունների փոխանցման-տեղափոխման անհրաժեշտություն՝ իրականության չափման միավորների մի միջակայքից մեկ ուրիշը:

Նույնիսկ մինչհասարակական շրջանի մարդը արժեք էր տեսնում իր գործողությունների մեջ. որսորդության նվաճումներն արդեն հավերժանալու հնարավորություն էին ընձեռում նրան: Տեղի էր ունենում սուբյեկտ ներառող օբյեկտիվի տեղափոխությունը իրականության դեռևս մեկ չափման՝ ժամանակի մի որոշակի միջակայքից դրան հաջորդող մյուսները: Մինչհասարակական և, իհարկե, մինչազգային անհատը մի տեսակ ծածկագրված տեքստ էր փոխանցում իր հաջորդներին: Այսօրվա հայացքը այդ ծածկագիրը գուցե չափազանց պարզ կորակի և՛ ձևային, և՛ բովանդակային առումներով, բայց այն ըստ էության հասարակական և ազգային անհատի ստեղծած տեքստի նախատիպ է ցանկացած իմաստով: Փաստ է նաև այն, որ որսորդության շրջանի կամ այսօրվա մարդու համար ոչ թե սխրանք, այլ «սխրանք» ներկայացնող այդ ծածկագիր տեքստերը հետագայում հասարակական կամ ավելի ձիշտ՝ ազգային անհատի ժամանակաշրջանում որակվում են որպես մշակույթ՝ մի այնպիսի երևույթ, որի հետ առանձնապես «հաշվի չեն նստում» ճակատագրական նշանակության հարցեր լուծելիս: Գոյություն չունի թեկուզ պատմական իրադարձություններ ներկայացնող

*Հոդվածն ընդունվել է տպագրության 22.04.2013:

կտավներից կազմված պատմության դասագիրք, այսինքն՝ որքան էլ տվյալ կտավը ձգգրիտ ներկայացնի տվյալ իրադարձությունը, միևնույնն է, այն չի դառնում սերունդներին դաս:

Դրա փոխարեն տեքստի մյուս տեսակը, որ դեռ կանգնած է մշակույթի և գիտության սահմանների միջև, եթե ոչ տվորաբար, ապա գոնե երբեմն՝ սուբյեկտիվության պրիզմայով անցած օբյեկտիվ իրականությունն է ցույց տալիս: Այն միանշանակ սերունդ դաստիարակելու իրավունք է ձեռք բերում: Այսպես, թե՛ պատմական ուղղվածության գեղարվեստական գրականությունը, թե՛ նույնիսկ փաստագրությունը հավասար են պատմություն ներկայացնող մշակույթին, քանի որ փաստագրությունը, եթե կատարելություն էնթադրելով համարենք օբյեկտիվի հենց օբյեկտիվ վերարտադրություն, միևնույնն է, ընկալվելիս ստանալու է սուբյեկտիվի գոնե՝ երանգը:

Իսկ պատմական ուղղվածության գեղարվեստական գրականությունը ի սկզբանե անցնում է սուբյեկտիվի միջով, այսինքն՝ հեղինակը վերարտադրում կամ ներկայացնում է իրականությունը սեփական տեսանկյունից: Այնուամենայնիվ, բացահայտ լեզվական տեքստը վաղուց հանդես է գալիս որպես իրականության ձգգրիտ վերարտադրման միջոց, և դա կարծես թե անվիճելի է: Իսկ տեքստը սահմանելով որպես իրականության վերարտադրման միջոց՝ ստանում ենք լեզվական խոշորագույն նշանի լավագույն սահմանումը: Կարելի է նաև առանձնացնել երեք տիպի տեքստ՝ հաշվի առնելով այդ նշանի ու իրականության կապը. **Ժամանակ կրող տեքստ** (օրինակ՝ պատմություն շարադրող տեքստերը), **տարածություն կրող տեքստ** (օրինակ՝ տեղանքի նկարագրությունները) և **տեքստ՝ որպես առանձին իրականություն** (դա այն է, երբ ամեն ինչ կամ որոշ հատվածներ հորինված են):

Իրական ժամանակը, այսպես ասած՝ ռեկուրսիվ պատկերի կամ հանրահայտ տիկնիկի կառուցվածքն ունի. մարդկության ընդհանուր շարժումը բաղկացած է առանձին ազգերի ու պետությունների շարժումներից, վերջիններս իրենց հերթին՝ առանձին մարդկանց շարժումներից: Յուրաքանչյուր մարդ ունի սեփական ժամանակը, որ հատուկ բառով «կյանք» ենք կոչում: Այն բաղկացած է ավելի փոքր շարժումներից: Հանրահայտ է, որ այդ բոլորը տիեզերական շարժման մասերն են¹:

Մի կողմ դնելով բոլոր ժամանակների միջև եղած հարաբերությունները, որոնք ամենայն հավանակությամբ **սիներգետիկական** համակարգ են, կարող ենք ասել, որ նշված բոլոր ժամանակները նոր՝ համեմատաբար երկար գոյություն են ստանում տեքստի շնորհիվ. բազմաթիվ մարդիկ օրագրության տեսքով «պահպանում» են իրենց ժամանակը, ժողովուրդները ունեն իրենց պատմություններն «անմահացրած» տեքստեր և այլն:

Տարածությունը նույնպես ժամանակի կառուցվածքն ունեցող չափման միավոր է: Այն նոր գոյություն է ստանում տեքստերում նկարագրությունների տեսքով: Քանզի **բացի նրանից, որ տեքստը այդ երկու չափումների կրողն է, այն նաև իրականությանը զուգահեռ գոյություն ունեցող այլ իրականություն է**: Խոսքը ոչ թե քվանտային օրենքներին ենթարկվող համակարգի մասին է, այլ գուցե դրանից ավելի: Տեքստը դատա-

1 Անհատի և Տիեզերքի փոխհարաբերության մասին տես Вульф К. Антропология. История, культура, философия. СПб., 2008.

պարտված չէ ներկայացնելու միայն և միայն իրականությունը, լինելու գուտ հայելի: Միանգամայն հնարավոր է ստեղծել տեքստ, որ ոչ միայն չարտահայտի իրականության որևէ հարաբերություն, այլ նաև բոլորովին չհամապատասխանի իրականում գոյություն ունեցող որևէ հատվածի: Ընդ որում, ոչ թե ֆանտաստիկ երևույթներ, որ երբևէ կարող են իրականություն դառնալ, այլ սովորական ինչ-որ իրադրություններ կամ իրադարձություններ, որ չեն եղել և երբեք չեն լինելու իրական²: Տեքստի այս տեսակը, ի տարբերություն մյուս երկուսի, ստեղծվում է հասարակության կամ ազգի մաս դարձած անհատի կողմից ու դառնում մշակույթ: Չնայած նրան, որ այն իրականության հայելի չէ, այնուամենայնիվ որևէ առումով ազդում է անհատական կամ հասարակական ու ազգային զարգացման վրա: Այս տեսակը այլ իրականություն է այն իմաստով, որ այն ստեղծելիս հեղինակը ազատորեն «կառուցում կամ քանդում» է, դասավորում ու կարգավորում դեպքերը, ստեղծում և ջնջում դեմքեր և այլն:

Տեքստը տարբեր ժամանակներում ու տարածություններում ապրող մարդկանց խմբերի միջև միակ հաղորդակցման միջոցն է: Անցյալի և ներկայի տեքստային հաղորդակցումը անհիշելի ժամանակներից կոչվում է «պատմություն»: Տեքստի բոլոր տեսակները իրենց հոմանշային տարբերակներով՝ թարգմանված ձևերով, անհիշելի ժամանակներից կապեր են ստեղծում և՛ ժամանակային նույն, բայց տարածության տարբեր միջակայքերում ապրող մարդկային խմբերի միջև, և՛ ժամանակային ու տարածական տարբեր միջակայքերում ապրողների միջև: Մշակութային տեքստը նույնիսկ երկու պլանով աշխատող տեքստ է, որ, չնչին տեղեկություն տալով իրականության մասին, որոշակի արտահայտությունն է իր հեղինակի՝ մարդու կամ մարդկանց հոգևոր-մտածականի: Մշակութային տեքստը ժողովուրդների հաղորդակցման միջոց է³:

Ի վերջո պետք է ասել, որ **տեքստը մի կողմից ընդգրկում է իրականությունը կամ ընդունակ է այն ընդգրկելու, մյուս կողմից՝ ինքն էլ այդ իրականության մասն է**: Եվ հետաքրքիր է, որ ժամանակային տարբեր հատվածներում ապրող մարդկանց համար մի տեսակ ջնջվում է նախորդ ժամանակից իրենց հասած տեքստատեսակների միջև սահմանը: Ասենք՝ դարեր անց ինչ-որ մեկը կարող է կարդալ իրեն հասած տեքստը, բայց այդ տեքստից ոչ մի կերպ չի կարող ենթադրել դրա՝ իրական կամ պարզապես հորինված լինելը⁴. այդպես, օրինակ, հավատում ենք, որ երբևէ ինչ-որ արքա մասնակցել է օլիմպիական խաղերին:

Ուրեմն տեքստի բազմաթիվ հատկանիշների մեջ պետք է հատկապես ընդգծվեն դրա **պատմական** և **մշակութային** հատկանիշները: Տեքստը լեզվի պատմական ու մշակութային միավոր է, անսկիզբ ու անվերջ նշան: Սկզբունքորեն հնարավոր է ներկայացնել մարդկության պատմությունը՝ սկսած չնչին կամ չնչին թվացող կենցաղային վիճակից մինչև շրջադարձային կամ հեղափոխական իրադարձություն, ընդամենը՝ մեկ տեքստով: Սա միանգամայն հնարավոր է տեսականորեն. եթե բոլոր մարդիկ առանց բացառության գրի առնեն սեփական գործունեությունը, ապա դրանք բոլորը

2 Տես նույն տեղում, էջ 208–215:


3 Տես Ортега-и-Гассет Х. Эстетика. Философия культуры. М., 1991, с. 186–203.

4 Տես նույն տեղում, էջ 289:

համադրեն, կատարվի հսկայական ծավալով մի տեքստ, որը, սակայն, կունենա ընդամենը պայմանական սկիզբ ու պայմանական վերջ:

Տեքստի պատմական և մշակութային հատկանիշները կարծես թե միահիուսված են⁵: Տեքստը՝ որպես պատմական երևույթ, ներառում է նաև մշակութային տեքստը. ցանկացած ժողովրդի պատմություն ներկայացնում է նաև տվյալ ժողովրդի ստեղծած մշակույթը: Մշակութային առումով այն ոչ թե ընթացք է, այլ այս կամ այն կերպ հիշարժան հատվածների արտահայտություն. գրականությունը ցույց է տալիս տվյալ պահը՝ երբեմն նույնիսկ օգտվելով արդեն ավանդված պատմական տեղեկություններից: Չնայած պատմական և մշակութային տեքստերի ծագման աղբյուրը մեկն է, դրանց նպատակներն ու ճանապարհները տարբեր են. առաջին իմաստով տեքստը գործում է հասարակական-պատմական մակարդակում, իսկ երկրորդ իմաստով՝ հոգևոր-մշակութային: Եվ ըստ էության դժվար է դրանցից որևէ մեկի դերը մյուսին գիջող համարել, որովհետև **պատմությունը հասարակության զարգացման ու գոյության դասագիրք է, իսկ մշակույթը՝ հասարակության որակի գրավականը**: Մշակույթն ազգի անձնագիրն է, և մարդկության պատմությունը վաղուց ավարտված կլիներ, եթե մարդն ապրեր միայն քաղաքակրթությամբ, բայց բարեբախտաբար յուրաքանչյուր մարդ ապրում է նաև մշակույթի տարածության մեջ, որտեղ միջոցը «ես»-ն է, իսկ նպատակը՝ «նա»-ն⁶:

Պատմական ու մշակութային տեքստերի հարաբերությունը կարելի է ցույց տալ այսպես.



Այսպիսով, այն պահին, երբ իրականությունը դադարեց միայն օբյեկտիվ լինելուց, ու մարդը կարևորեց ոչ միայն այդ իրականության գոյությունը, այլ նաև ինքն իրեն և իր գործունեությունն այդ իրականության մեջ, առաջացավ լեզվական մի միավոր, որը կոչված էր ժամանակների ու տարածությունների կամուրջը կամ կրողը լինելու: Այդ միավորի շնորհիվ անցյալն անընդհատ փոխադրվում է ներկա, ներկան հարաբերականորեն հավերժանում է, ապագան՝ ուրվագծվում կամ նախագծվում: Իրականությունը հատվածաբար անվանող ու օբյեկտիվից սուբյեկտիվ կառուցող լեզվական արդեն գոյություն ունեցող նշանները կապակցվում ու համակարգի արժեք ունեցող նշան են ձևավորում, որը, սակայն, ոչ թե իրականությունը հատվածաբար է անվանում կամ փոխադրում, այլ ամբողջությամբ, թեև դրա կառուցվածքային տարրերը՝ բառերը, բառակապակցությունները և այլն, իրականության հատվածներն են անվանում: Իրողությունը լրիվ, բայց սովորաբար յուրահաստուկ ձևով ներկայացնելու իր բնույթով լեզվի խոշորագույն նշանը՝ տեքստը, հավասարվում է լեզվական փոքրագույն նշանին՝ հնչյունին: Թեև հնչյունը,

5 Межуев В., Культура и история. М., 1977, с. 154-177.

6 Исаев В. Человек в пространстве цивилизации и культуры. Луганск, 2003, с.68, 69.

ինչպես լեզվական մյուս նշանները, ներկայումս գոյություն ունեն արդեն անկախ առանձին քմահաճույքից ու կամքից, իսկ տեքստի գոյությունը ուղղակի կապի մեջ է մարդկային քմահաճույքի և կամքի հետ, տվյալ իրողությունը կարող է բոլորովին չարտահայտվել տեքստով, ավելին, երբեմն նույնիսկ մեծ կամքն ու քմահաճույքը չեն կարող տվյալ իրողությունը վերածել տեքստի: Օրինակ՝ եթե վերը նշված անսկիզբ ու անվերջ հսկայածավալ տեքստ ստանալը համարենք քմահաճույք կամ պարզապես ցանկություն, ապա կհամոզվենք, որ իրողությունից տեքստ ստանալը, իսկապես, երբեմն կարող է անիրագործելի լինել:

Եթե տեքստի գոյությունը կամայական է, և եթե տեքստի հատկանիշների մեջ ընդգծելի են պատմականությունն ու մշակութայնությունը, ապա պատմությունն ու մշակույթն ընդհանրապես կամայական բնույթ ունեն: Սա նշանակում է, որ եթե որևէ սերունդ չցանկանա իր փորձն ավանդել իրեն հաջորդողներին, եթե չցանկանա արտահայտություն պարզնել իր ապրումներին ու զգացումներին, ապա մարդկությունը հավերժական կանգի մեջ կապրի՝ անընդհատ նույն աստիճանին մնալով թե՛ կենցաղային-հասարակականի, թե՛ հոգևոր-հոգեկանի տեսանկյունից:

Լեզու-մարդ-տեքստ-հասարակություն բանաձևը ճշգրիտ կերպով գործող է ժամանակի ցանկացած հատույթում և բոլոր հատույթներում միաժամանակ. **լեզուն** անհատի գիտակցության (այսինքն՝ մեկ մարդու) գոյության գրավականն է, **մարդու կամքն** է որոշում հաղորդակցության անհրաժեշտությունը, այսինքն՝ տեքստի գոյությունը, իսկ **տեքստը**՝ հատկապես իր երկու բարձրագույն արժեքներով, մարդկային համահավաք գիտակցության՝ **հասարակության** գոյության և զարգացման հիմքն է:

Summary

THE HISTORICAL AND CULTURAL VALUE OF TEXT

Siranush G. Hovhannisyan

The article discusses the specific role of the text. Text is explored in terms of history and culture. It is also emphasized that in contrast with other linguistic units, the text depends on the human desires, that is an idea which can be expressed in words, if the author wants, but the idea would not become a text, as the author did not make it into the text.

This unit of the language is evaluated in terms of time and space in this article. Both time and space are divided into two aspects – historical and personal.

In fact, the text is defined as the carrier of social life in such a way or another.